

ԱՊՍՏՈՒԿԵԱՅ ՅՈՐԵԼԵԱՆ ՀԱՆԴԷՍ ՔԱՂԱՅՈՒԹԵԱՆ

Գ Ե Ր Յ. 3. Թ Ա Դ Է Ո Ս Վ. Ի Թ Ո Ռ Ն Ե Ա Ն

ԹԱԳԱԿԻՐ-ԱՐԲԱՅԻ

Մշտադալարն Մայիս բոլորեց երկրորդ յոթելինական պսակ մ'ալ: Միաբանութեանս քաղմարդին Գործիչներէն եւ ծերունազարդ անդամներէն մին եւս, աննդակիցն եւ ընկերակիցն Գեր. Աբրահոմ Գերյ. Հ. Թաղէոս Վ. Թոռնեան, կը ցնծալ Մայիս 15ին իւր 60ամեայ քահանայութեան տարեդարձն, օրհնութեամբ Տեառն առոյգ եւ առողջ հակառակ քաղմաժամանակեայ ալեաց:

Թէեւ վաստակաւոր Յորելեարն փափաքեցաւ ի լուութեան տօնել քարերաստիկ օրս, ըայց Խմբագրութիւնս համարձակութիւն կը շնորհէ անձին հրապարակաւ ողջունել դասական հայերէնի հոյակապ Ուսուցիչն, որուն Անունն սիրելի եղած է ամբողջ կէս դար հայ շրթունքներուն եւ իրեն երախտապարտ ձգած է ոսկեղինիկ հայերէնի սիրահար սերունդներ:



Նեաններու եւ Այտընեաններու, յափշտակուած է դասական հայերէնի հրապոյրով, սիրած զայն եւ անոր ուսումնասիրութեան նուիրուած: Զէ զոհացած անձամբ ճաշակել անոր քաղցրութիւնն եւ զմայլիկ այլ իբրեւ մեղու ժրջան շրջած դասական ծաղիկներու վրայ հաւաքած է արնոյշ հիւթեր, եւ զայն մեղձ զործած դիւրահալ սնունդ

Թոռնեան մանուկ հասակէն աշակերտած Սպեւնձայած է հայ մանկտույն: Բանի քանի բիմբեր քաղցրացած են դասական հայերէն մատենագրութենէն խնամով ընտրուած «Հատրնտիր Ընթերցողութեան», ըմբռնմամբ եւ ազնուացած հարազատ հայեցի ճաշակով:

Թոռնեան նաեւ զործնական ասպարէզի վրայ ունեցաւ մեծամեծ արդիւնքնել Կ. Պոլիս, Զմիւռնիա եւ Վիեննա: Այտընեանի մահուրէն ետքը վեց տարի առժամապէս վարեց Միաբանութեան գործերը. երբ Սրբազան Քահանայապետէն արժանացաւ Թագակիր Արքայի (abbate mitrato) տիտղոսին եւ Փրանկ. Յովսէփի Կարգին Հրամանատարութեան շքանշանով պատուեցաւ:

Մեր ինդակցութիւնները քաղմարդին Յորելեարին, եւ ջերմ մաղթանքները Դասական հայերէնի հոյակապ Ուսուցչին:

Խմբագրութիւն «Հանդիս»,:

1 Ա. հատորն լոյս տեսաւ 1866ին (երկրորդ տպագրութեամբ՝ 1891ին) եւ Բ. հատորն 1910ին: